և Ս. վկայից Ղամբէոսի և Ղամ-
բէուհւոյն.
3 Գշ. աձ. Ս. Եւստաթէոսի և կնոջ 29
նորա Թէոփիստեայ և երկուց որդ-
ւոցն և կուսանացն Արմենեայ և
Ներքսանակեայ։
4 Դշ. ակ. Պահք. 30
5 Եշ. բձ. Ս. Իշխանացն Սահակայ 1
և Համազասպայ։
◯ Նր. լս. Տեղ-տեղ ձիւն.
6 Ուր. բկ. Պահք 2
7 Շբ. գձ. Ս. Եօթանասունն և եր- 3
կու աշակերտացն Քրիստոսի.
8 ✤ Կիր. գկ. Դ. Կիր. զկնի Ս. Խաչի 4
Հարսանիք։
9 Բշ. դձ. Ս. Փոկասու հայրապե- 5
տին և Սրանոսի հետևողին Առա-
քելոցն.
10 Գշ. դկ. Ս. կուսանացն Թեկղի, 6
Վարվառեայ և Պեղագեայ.
⊙ Արեգ ՚ի Կարիճն մտանէ.
11 Դշ. աձ. Պահք. 8
☽ Առ. քռ. լուսնի. Պարզկայ.
12 Եշ. ակ. Ս. Պանտալէոնի բժշկին, Ք
Երմողեայ քահանային և Սոփրոնեայ կուսին.
13 Ուր. բձ. Պահք. 9
14 Շբ. բկ. Ս. Թարգմանչաց վար- 10
դապետացն մերոց Մեսրոպայ,
Եղիշէի, Մովսէսի Քերթողին,
Դաւթի անյաղթ—փիլիսոփային,
Գրիգորի Նարեկացւոյն և Ներ-
սէսի Կլայեցւոյն։
15 ✤ Կիր. գձ. Ե. Կիր. զկնի Ս. Խաչի Լ1
Հարսանիք.
16 Բշ. գկ. Գիւտ նշխարաց Ս. Գրիգո- 12
րիսի Աղուանից կաթողիկոսի և
Ս. Հարցն Թաթլոյ, Վարոսի և
Թովմասու, Անտոնի Կրօնիդեայ և
եօթն խոստովանողացն՝ որք
Ց՚ինանկներ վանին կատարեցան.
17 Գշ. դձ. Ս. Առաքելոցն Անանիայի 13
Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպ.
Յովհաննու, Տիքայի և Սիղուանոսի.

Օ | | Լ

18 Դշ. դկ. Պահք։ 14
19 Եշ. աձ. Ս. Դիոնեսիոսի Արիսպա- 15
գացւոյն, և Ս. Առաքելոցն Տիմո-
թէոսի և Տիտոսի.
◯ Լրումն լուսնի. Թխպոտ եղ.
20 Ուր. ակ. Պահք. 16
21 Շբ. բձ. Ս. Աւետարանչացն 17
Մատթէոսի, Մարկոսի, Ղուկա-
սու և Յովհաննու.
22 ✤ Կիր. բկ. Զ. Կիր. զկնի Ս. Խաչի 18
Հարսանիք։
Յուսաց՝ Տօն Ղազարու Ս. Աս-
տուածածնայ պատկերին.
23 Բշ. գձ. Ս. Ղուկիանոսի հայրա- 19
պետին որ հաւատաց ՚ի Խաչե-
լութիւնն Քրիստոսի և Յովսէփայ
Աստուածահօրն, Յովսէփայ Արի-
մաթացւոյն, բարեկամին Քրիս-
տոսի Ղազարու և քերցն նորա
Մարթայի և Մարիամու.
24 Գշ. գկ. Ս. Թէոդորիտոսի քահա- 20
նային, Զենոնի զինուորին, Մա-
կարայ Եղոգեայ և Թամարեայ.
25 Դշ. դձ. Պահք. 21
26 Եշ. դկ. Ս. Խարիթեանց և Ս. Վկա- 22
յիցն Արամեայ և Քրիստափորի
և երկուց կանանցն Կալինիկեայ
և Ակուլինեայ.
27 Ուր. աձ. Պահք. 23
◐ Վր. քռ. լս. Անձրևային.
28 Շբ. ակ. Ս. Երկոտասան վար- 24
դապետացն Իերոթէոսի, Դիոնե-
սիոսի, Սեղբեստրոսի, Աթանա-
սի, Կիւրղի Երուսաղէմացւոյն,
Եփրեմի Խորին Ասորւոյ, Բարսեղի
Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսա-
ցւոյն, Գրիգորի Աստուածաբա-
նին, Եպիփանու Կիպրացւոյն,
Յովհաննու Ոսկեբերանին և Կիւր-
ղի Աղեքսանդրացւոյն.
29 ✤ Կիր. բձ. Է. Կիր. զկնի Ս. Խաչի 25
Գիւտ—Խաչի Հարսանիք։
30 Բշ. բկ. Ս. Անաստասեայ քահ. Վա- 26
րոսի և Թէոդորիտեայ և որդւոց նո-
րա և որք ընդ նմա կատարեցան.
31 Գշ. գձ. Ս. Հիպերեքեանց, որք ՚ի 27
Սամոսատ կատարեցան.

—

Այս ամսույս 1-էն մինչև 30-ն
օրն պակասել է 1 ժ. 4 րոպէ.



# ՆՈՅԵՄԲԵՐ

Նոյեմբեր ամս. անունը ծագում է լատին November բառից, որ նշանակում է իններորդ։ Հռոմայեցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս հիմայ, այլ Մարտ ամսից։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ։ Իսկ Վրաստանում, որովհետև այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիօրգ—օրայ, կամ Գէօրգօբիս-Թվէ, որ նշանակում է Գէորգայ-տօնի ամիս։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ՆՈՅԵՄԲԵՐ.— Աղեղնաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ ունող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, փառուող, աշխատասէր, իրենց բարեպաշտ, արդար ուրախ, բարի և իր ունեցած լաւ յատկութիւնների համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և արտաքուստ ուրախ։ Գլխաւոր պակասութիւնը իր կասկածոտ բնաւորութիւնն է։

Նոյեմբերին ծնուածները առհասարակ արդիւնաբերութեան մէջ բախտաւոր են լինում և միջին տարիքում կարողութեան տէր։ 33 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալու են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խոր ծերութեան կը հասնեն։

# ՆՈՅԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Դշ. ՃԶ. Պահք։ | 28 |
| 2 | Եշ. ՓԴ. Ս. Սեւերիանոսի Սեբաստացւոյն, Բաբելայ ծերոյն և 84 աշակերտացն նորին։ | 29 |
| 3 | Ուր. ՓԵ. Պահք։ | 1 |
| | ⊛ Ծնունդ լս. Գորգիոյ։ | |
| 4 | Շբ. ՓԶ. Ս. Յովհաննու Ոսկեբերանն հայրապետին։ | 2 |
| 5 | ✠ Կիր. ՓԷ. Ը. Կիր. զկնի Ս. Խաչի Հարսանիք։ | 3 |
| 6 | Բշ. ՓԸ. Ս. Ստեփաննոսի Հռոմայ հայրապետին և քահանայից, սարկաւագաց և ժողովրդոց։ | 4 |
| 7 | Գշ. ՓԹ. Ս. Ակեփսիմեայ եպիսկ. Յովսէփայ քահ. Այթալայ սարկաւագին և Պղատոնի վկային։ | 5 |
| 8 | Դշ. ՔԱ. Պահք։ | 6 |
| | Լոյս Ընծայումն Ս. Աստուածածն. | |
| 9 | Եշ. ՔԲ. Ս. Հայրապետացն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի, Պօղոսի խոստովանողին և Ս. Նոտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի։ | 7 |
| 10 | Ուր. ՔԳ. Պահք։ Ցերեկ. նախատ. | 8 |
| | ☾ Առ. քռ. լս. Փափուխալի եղ. | |
| 11 | Շբ. ՔԴ. Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի և ամենայն երկնային զօրացն։ | 9 |
| 12 | ✠ Կիր. ՔԵ. Թ. Կիր. զկնի Ս. Խաչի Հարսանիք։ | 10 |
| | ⊛ Արեգ. 'ի Աղեղնաւորն։ | |
| 13 | Բշ. ՔԶ. Ս. Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպ. Բուրայ քահանային և Տիմոն սարկաւագին։ | 11 |
| 14 | Գշ. ՔԷ. Ս. Դիմետրեայ վկային և Բասիլիկոսի քահանային։ | 12 |
| 15 | Դշ. ՔԸ. Պահք։ | 14 |
| 16 | Եշ. ՔԹ. Ս. Գուրիասայ, Սամոնայ, Աբիբայ սարկաւագին, Ոսմանոսի միայնակեցւոյն, Մանկանն խոստովանողի և Հիւսիքրոսի զինուորին։ | 14 |
| 17 | Ուր. ՔԺ. Պահք։ | 15 |
| 18 | Շբ. ՔԺԱ. Ս. Առաքելոյն Անդրէի և Փիլիպպոսի։ | 16 |
| | ⊛ Լր. լուսնի. Խառնակ եղ. | |
| 19 | ✠ Կիր. ՔԺԲ. ԺՌ. Կիր. զկնի Ս. Խաչի Բարեկենդան Յիսնակի պահոց։ | 17 |
| 20 | Բշ. ՔԺԳ. 1. օր Յիսնակի պահոց։ Ցերեկ. նախատօնակ։ | 18 |
| 21 | ✠ Գշ. ՔԺԴ. 2. օր Յիսնակի պահոց։ ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն.—Եւս Յ. և Աննայ։ | 19 |
| 22 | Դշ. ՔԺԵ. 3. օր Յիսնակի պահոց։ | 20 |
| 23 | Եշ. ՔԺԶ. 4. օր Յիսնակի պահոց։ | 21 |
| 24 | Ուր. ՔԺԷ. 5. օր Յիսնակի պահոց։ | 22 |
| 25 | Շբ. ՔԺԸ. Ս. Գրիգորի Սքանչելագործի, Նիկողայոսի հայրապետին և Մինասայ եպիսկոպոսին։ | 23 |
| | Լոյս. Յղութիւն Ս. Աստուածած. | |
| 26 | ✠ Կիր. ՔԺԹ. Ժ. Կիր. զկնի Ս. Խաչի Հարսանիք։ | 24 |
| | Վր. քռ. լս. Չորեքշ.։ | |
| 27 | Բշ. ՔԻ. Ս. Կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ։ | 25 |
| 28 | Գշ. ՔԻԱ. Ս. Լուկիանոսի քահանայի և Տարադրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ և այլոց աշակերտացն Քրիստոսի։ | 26 |
| 29 | Դշ. ՔԻԲ. Պահք։ | 27 |
| 30 | Եշ. ՔԻԳ. Ս. Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տաւրոմենեայ եպիսկոպոսին։ | 28 |

—

Այս ամսուայ 1-էն մինչև 31-ն օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։



# ԴԵԿՏԵՄԲԵՐ

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական decembre բառից, որ նշանակում է տասներորդ։ Այսպէս անուանեց ամիսների հիմնադիր Հռոմուլոսը տարուայ տասներորդ ամիսը։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Քաղոց։ Արեւմտեան Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդեան տօնը, այս պատճառաւ այս ամսին վրց. անուանել են Քրիստիշոբայ, կամ Քրիստիշոբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս։

## ԱՍՏՂԱԳԷՏՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Այծեղջիւրն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինիլ և ձախորդութիւնները շատ կ'քաշէ, բայց աշխատասէր, թեթեւամիտ, եռանդոտ, չար, ագահ և անբարեխիղճ կըլինի։ Իր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երեւում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ, որովհետեւ իր ամեն բաւականութեանց սիրահար է։

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթեւամիտ, ջահէլ ժամանակը վերին աստիճանի ամօթխած, [illegible] խառնակիչ, պատկառած ժամանակ եւ խանդոտ՝ թէև այս պակասութիւնները միշտ աշխատում է ծածկել։ Եթէ չափաւոր և զգոյշ լինի մինչև խորին ծերութեանը կըհասնի։

Դեկտեմբերին ծնուածները, առհասարակ [illegible] գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգոյշ. սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութիւն։ [illegible] օգտուող, իսկ շինութիւններից վնասուող։ Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանալ։

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Ուր. ԲԼ. Պահք։ Յերեկ. նախատ. | 29 |
| 2 | ✠ Շբ. ՔՅ. Ս. Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ։ | 30 |
| | Ⓣ Ծնունդն լու. Հաղորդական իգ. | |
| 3 | ✠ Կիր. ՔԼ. Բ. Կիր. զկնի Յիսնակին։ Հարսանիք։ | 1 |
| 4 | Բշ. ՓՅ. Ս. Գենարիոսի եպիսկոպոսին և Մերկերիոսի զինուորին, Յակովբայ և Բարբարեայ։ | 2 |
| 5 | Գշ. ՏԼ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախավկայ և անդրանիկ թագաւորին մերոյ. | 3 |
| 6 | Դշ. ԱՅ. Պահք։ | 4 |
| 7 | Եշ. ԱԼ. Ս. Հարցն Եգիպտացւոցն, Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գրչեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիլուանու, Դանիէլի, Օրսիսիոսի, Մակարիոսի, Պիմենի և այլոց Ս. Հարցն։ | 5 |
| 8 | Ուր. ԲՅ. Պահք։ Յերեկոյին նախատօնակ։ | 6 |
| 9 | ✠ Շբ. ԲԼ. ՏՕՆ ՅՂՈՒԹԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՑԱՆՆԱՅԷ։ | 7 |
| | Ⓢ Արեգակն 'ի յԱյծեղջիւրն։ Ձմեռնամուտ և արեւադարձ. ցերեկն սկսանի երկարել և գիշերն կարճանալ։ | |
| | Ⓓ Առ. քառ. լու. Դատաւորական իգ. | |
| 10 | ✠ Կիր. ՔՅ. Գ. Կիր. զկնի Յիսնակին։ Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց | 8 |
| 11 | Բշ. ՓԼ. Պահք։ Ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրաֆոսի և կամաւոր տագնապացն Յովհաննու և Աղեքսիանոսի։ | 9 |
| 12 | Գշ. ՓՅ. Պահք։ Ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Նմանեաց ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պօղիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն, որք յՍեբաստիա կատար. | 10 |
| 13 | Դշ. ՏԼ. Պահք։ | 11 |
| 14 | Եշ. ԱՅ. Պահք։ Ս. Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիոսի, Որեստեայ և Մարդարիոսի։ | 12 |
| 15 | Ուր. ԱԼ. Պահք։ Յերեկոյին նախատօնակ։ | 13 |
| 16 | Շբ. ԲՅ. Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին։ | 14 |
| 17 | ✠ Կիր. ԲԼ. Դ. Կիր. զկնի Յիսնակին։ | 15 |
| | Ⓣ Լր. լու. Փոփոխական իգ. | |
| 18 | Բշ. ՔՅ. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Ադդէի և Մարութայ եպիսկոպոսին։ | 16 |
| 19 | Գշ. ՔԼ. Ս. Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոնեայ վկ. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիկեայ։ | 17 |
| 20 | Դշ. ՓՅ. Պահք։ | 18 |
| 21 | Եշ. ՏԼ. Ս. կուսանացն Ինդոսի, Դոմնինէ և Գլիկերիոսի քահանային և երկուց բիւրոցն, որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց։ | 19 |
| 22 | Ուր. ԱՅ. Պահք։ Յերեկոյին նախատօնակ։ | 20 |
| 23 | Շբ. ԱԼ. Ս. Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն։ | 21 |
| 24 | ✠ Կիր. ԲՅ. Ե. Կիր. զկնի Յիսնակին Հարսանիք։ Յերեկ. նախատօնակ։ Ց և Ա. Ճրագալոյց Ծննդեան։ | 22 |
| 25 | Բշ. ԲԼ. Ս. Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին։ Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստեփաննոս եկեղ. Տփխիսայ' որ 'ի յանապատին կուսանաց, ուր է ամփոփեալ մասն նշխարաց — աջ Ս. Ստեփաննոսի։ Յերեկ. նախատ. | 23 |
| | Ց. և Ռուսաց' Ծնունդ Տեառն և սուրբ է նոցա մինչև 'ի չորսն Յունուարի։ | |
| | Є Վերջին քառ. լու. Չափական իգ. | |
| 26 | Գշ. ՔՅ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ | 24 |
| 27 | Դշ. ՔԼ. Պահք։ Յերեկ. նախատ. | 25 |
| 28 | Եշ. ՓՅ. Ս. որդւոցն Որոտման Յակովբայ առաքելոյն և Յովհաննու Աւետարանչին։ Բարեկենդան' Ծննդեան պահոց։ | 26 |
| 29 | Ուր. ՏԼ. Պահք։ | 27 |
| 30 | Շբ. ԱՅ. 1. օր Ծննդ. պահոց։ Ս. Բարսեղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Աբրայ Եփրեմի Խորին Ասորւոյ։ | 28 |
| 31 | Կիր. ԱԼ. 2. օր Ծննդ. պահոց | 29 |

Այս ամսուայ 1 ից մինչև 31-ը օրը պակասել է 0 ժ. 37 ր.

# ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ-ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԵՑՈՅՑԻ» 1917 ԹՈՒԱԿԱՆԻ

## I. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հայրապետ և Կաթողիկոս ամենայն հայոց Տ. Տ. Գէորգ Ե. ընտրեալ ի 13-ն դեկտ. 1911 թ. և Օծեալ ի 1-ն յուլիսի 1912 թ.

1) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ—Սահակ Բ.

ԱՂԹԱՄԱՐԱՅ—(Թափուր)։

2) ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ—(Թափուր)։

Կ. ՊՈԼՍՈՅ—Զաւէն արքեպիսկ.

—

3) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՀՈԴ

Ատենադամ Յուսիկ արքեպ. Տ. Մովսիսեան։

» Մատթէոս եպ. Մաթէոսեան։

» Սահակ վրդ. Ամատունի։

»

» Գէորգ վրդ. Չորէքչեան։

Պրոկուրոր Փ. Մելիք-Փարսադանեան

—

4) ԹԵՄԵՐ ԵՒ ԹԵՄԱԿԱԼՆԵՐ

ա) ԵՐԵՒԱՆԻ.—Փոխանորդ Թեմակալ առաջնորդի Խորէն եպ. Մուրադբէգեան։

բ) ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ.—Առաջ. Մխիթար եպ. Տէր-Մկրտչեան։

գ) ՂԱՐԱԲԱՂԻ.—Փոխան. Թեմ. առաջ. Վահան վրդ. Տէր-Գրիգորեան։

դ) ՀԱՇՏԱՐԽԱՆԻ.—Փոխանորդ Թեմ. առաջ. Մեսրոպ եպ. Տէր-Մովսիսեան։

ե) ՇԱՄԱԽՈՒ. — Առաջնորդ Թէմի Բագրատ եպ. Վարթազարեան։

զ) ԲԵՍԱՐԱԲԻՈՅ.—Առաջնորդ Թեմի, Ներսէս արքեպիսկ. Խուդավերդեանց

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ.—Կառավարիչ Թէմի Ներսէս եպ. Մելիք-Թանգեան։

ը) ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, (Թափուր)։

թ) ԵՒՐՈՊԱՅԻ.—Առաջնորդ Գէորգ եպիսկ. Իւթիւճեան.—Նստում է Մարսէյլ քաղաքում, որտեղ և հայոց մատուռ կայ—Ս. Յարութիւն։ Բացի դրանից առանձին հովիւներ կան՝ Փարիզում, Մանչեստերում և Սուչովայում։

ժ). ԱՄԵՐԻԿԱՅԻ.— Առաջնորդը (Թափուր) Նստում է Ուսթր քաղաքում, որտեղ կայ հայոց եկեղեցի Ս. Փրկիչ։ Բացի առաջնորդից առանձին հովիւներ կան՝ Նիւ-Եօրկում, Բոստոնում, Պրովիդէնսում, Լօրէնսում, Կալիֆօրնիայում, Չիկագոյում և Ֆրեզնօյում։

—

Տաճկաստանի թեմերի մասին տեղեկութիւնները, այս անգամ ես անկարող եղանք տալու։

# II. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

1917 Թ. ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

1) *Արեւի մասնաւոր խաւարումն յունվ. 10-ին, սկիզբը* 8 *ժ.* 43 *ր. առ. վերջը* 11 *ժ.* 9 *ր.*

2) *Արեւի մասն. խաւար. յունիսի* 6 *ին, սկիզբը* 1 *ժ.* 35 *ր., երեկ. վերջը* 5 *ժ.* 47 *ր. երեկոյեան։*

3) *Արեւի մասն. խաւար սկիզբը յուլ.* 6-*ին* 1 *ժ.* 56 *ր. առ. վերջը* 6 *ժ.* 28 *ր. առ.*

4) *Արեւի մանեկաւոր խաւարումն դեկ.* 1-*ին, սկիզբը* 11 *ժ.* 41 *ր. առ. վերջը* 4 *ժ.* 12 *ր. ցերեկուայ։*

5) *Ամբողջովին լուսնի խաւարումն* 21-*ից* 22 *ն յունիսի, սկիզբը* 9 *ժ.* 35 *ր. երեկ. վերջը* 3 *ժ.* 21 *ր. առ.*

6) *Լուսնի լիակատար խաւարումն* 15 *դեկտ. սկիզբը* 9 *ժ.* 53 *ր. առ., վերջը* 3 *ժ.* 28 *ր. երեկ.։*

*Այս բոլոր խաւարումներից Կովկասում կնկատուի միմիայն լուսնի խաւարումն յունիսին, այն էլ մասնաւոր։*

---

## ԴԱՆԻԷԼ ԳԻՍԱՍՏՂԸ

*Անցեալ* 1907 *թուականի գարնանն էր, որ ամերիկացի լայտոնի աստղագէտ Դանիէլը գտաւ մի գիսաւոր, որին գիտնականները ի պատիւ իր արած գիւտի, անուանեցին Դանիէլի գիսաստղը։*

*Յիշեալ գիսաւորի արեւի շուրջը կատարած շրջանառութիւնը—տեւողութիւնը, ըստ նոյն աստղագէտի դիտութեան տեւում է տասն տարի։*

*Անցեալ անգամ* (1907 *թ.*) *օգոստոսի վերջերին էր, որ գիսաւորը Թիֆլիսի հարաւ-արեւելեան հորիզոնում, հասարակ աչքով շատ պարզ նկատվում էր, իր գնդաձեւ մեծ գլխով և վիտխարի երկարաձիգ լայն պոչով, որը ձգուելով դէպի արեւմուտք, երեւում էր մեզ երեւացող, լրացած լուսնի տրամագծի մեծութեան չափից* 6—7 *անգամ աւելի երկարութեամբ։*

*Եթէ յիշեալ գիտնականի դիտողութիւնները և հետազօտութիւնները ճշտօրէն են կատարած, հետեւապէս պէտք է հաստատապէս ենթադրել, որ երկրիս բնակիչներին սոյն գիսաւորը դարձեալ*

*...սութեան կը գայ առաջիկայ 1917 Թ․, որը հաւանական է առաջիկայ ամառուայ վերջերին տեղի ունենալ։*

*Ուստի այդ գիսաւորով հետաքրքրուողները եթէ ցանկանում են ...ան առանց հեռադիտակի տեսնել պէտք է ժամանակին, առաւօտը ...րշալոյսից առաջ ժամը 3—4-ին այդ գիսաստղը փնտռեն արեւելա...րաւային հորիզոնում, որը մի շաբաթուայ ընթացքում Ցուլ և ...նգգետին կենդանակերպ համաստեղութիւնների միջոցով անցնե...վ կը մտնի Կոյս համաստեղութիւնը և այդտեղից արեւի ճառա...ւթներում անհետանալով, այլ ևս մեզ չի երեւայ դարձեալ մինչև ...ամն տարի, այսինքն մինչև 1927 թուականի ամառը։*

*Այս երեւոյթով հետաքրքրուողներից խոնարհաբար կը խնդրէի ...տելուն պէս, անմիջապէս բարեհաճէին մեզ մի բացիկով տեղե...ցնելու։*

Մ. Զմ...



# III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

## ՆՖԼՄԸՐԴՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1917 Թ. ՄԱՍԻՆ

Առաջիկայ տարւայ ընթացքում ե ղ ա ն ա կ ը կը լինի—Գարունն՝ թէև անձրևային, սակայն անարժելի։ Ամառն՝ հով, անձրևներ, վերջը երաշտ։ Աշնանը առաջուայ եղանակի հողմերը կը փչեն։ Իսկ ձմեռը սկզբումը բարեխառն, գետերի վարարում, վերջը քամոտ և խիստ ցուրտ, որից շատ գազաններ կը սատկեն։

Գ ա ղ ա ր ե ր ո ւ թ ե ա ն կողմից.—Դինու առատութիւն. տունկ կամ ծառ անկելը խիստ յաջողակ, դաշտերը լի ամեն տեսակ արմատեղէն բոյսերով, ծառերը պտղաբեր, պտուղները քաղցրահամ ու շուտ հասնող. սակայն շտապելու է, պտուղները շուտ քաղել ու հաւաքել, որ անձրևներից չփչանան։

Ա ռ ո ղ ջ ա պ ա հ ո ւ թ ե ա ն կողմից.—Երեխաների մէջ տկարութիւն. Խոշոր տեսակի անասունների կոտորած և շատ շների սատկել։

Կ ե ն ց ա ղ ա վ ա ր ո ւ թ ե ա ն կողմից.—Շատերը իրանց հայրենիքից տարագիր լինելով, հեռու երկիրներ կը չուեն ու կը գաղթեն. ճանապարհները ու նաւերը վտանգաւորներով լի կը լինեն. Շատ վէճեր ու վաճառականութեանը վնաս հասցնող դէպքեր տեղի կունենան։

Իսկ ք ա ղ ա ք ա կ ա ն ո ւ թ ե ա ն կողմից.—Շատ տեղ խռովութիւններ, տարաձայնութիւններ, սպանութիւններ ու զանազան տեսակ վնասներ առաջ կը գան։ Ասորիքում տրտմութիւն, Բաբելոն ժողովրդի մէջ շարժում։ Իսկ ինչպէս Յունաստանից, այնպէս էլ ուրիշ շատ տեղերից զօրքը ելնելով, շատ նահանգներ ու քաղաքներ աւեր կը տայ ու կը աւերէ։ Տեղի կունենան թագաւորների կեանքին սպառնացող դէպքեր ու արիւնահեղ պատերազմներ

# IV. ԱՌԱԾՆԵՐ

(Արևելեան իմաստասէրներից)

—Մի թշնամիդ աւելի շատ է, քան հազար հոգի բարեկամներդ։

—Բարութիւնը, բարութիւնով նեղ տեղով էլ է անցնում, միայն չարութիւնն է շուրջն ամեն տեղ ապականում։

—Թշնամուցդ բաւական է միանգամ զգուշանաս, իսկ բարեկամներիդ հետ միշտ կապուած լինելով, պէտք է հազար անգամ զգուշանաս։

—Հին բարեկամդ հազիւ թէ կարողանայ քեզ թշնամի դառնալ, իսկ եթէ թշնամանայ էլ, այդ նրան չի սազիլ։

—Թէկուզ թարս նստիր, միայն մի ստախօսիր։

—Քան թէ անցնես անպիտան մարդու կարմնջից, աւելի լաւ է ջուրը տանի քեզ միանգամից։

—Առանց պատճառի, մարդու քեզ հետ մի թշնամացնի։

—Այսօրուայ ձուն, էգուցուայ հաւից լաւ համարիր։

—Լաւ է խելօք թշնամի, քան յիմար բարեկամ։

—Արիւնը արիւնով չեն լուանայ։

—Շունը շան միս չի ուտիլ։

—Թող կերածս ըլի գարի, թաք գլուխս ըլի հանգիստ ու բարի։



# V. ԻՄԱՍՏՆԵՐ

—Նա է յետ մնում, ով չի յառաջադիմում։

—Մարդու ամենամեծ դժբաղդութիւնը, տեսողութիւնից զրկուելն է։

—Կեանքի մէջ ազնիւ մարդիկ, փափուկ բարձեր են, խորամանկ ու չարահոգի մարդկանց համար։

—Միայն այն խօսիր, ինչոր քեզ համար պարզ է, ապա թէ ոչ լռիր։

—Կեանքը—հիւանդութիւն է, որից մեզ թեթեւացնում է քունը, իսկ իսկական դեղը—մահը։

—Ամենահարուստ մարդը—խնայող է, ամենաաղքատը—ժլատ։

—Աշխարհը վերջ ունի, միայն ոխերիմ թշնամին է, որ վերջ չունի։

—Կինը՝ ինչպէս իր համոզմունքներըն է հեշտ կազմում, ճիշտ այնպէս էլ հեշտութեամբ փոխում։

—Կանանց համար ամենադժուարը իրանց սխալանքների խոստովանութիւնն է։

—Կինը երկու բանից սաստիկ խուսափում է, աղքատութիւնից և ծեր մարդկանց շրջանից։

—Մեծ մասամբ կանանցից անօգուտ է երեք բան պահանջել, արդարութիւն, զսպողութիւն և խելամտութիւն։

—Ոչ ոք չի կարող իմանալ, թէ չար կինը, դեռ ինչին կարող է եա ընդունակ լինել։

—Կանանց մօտ երբէք ձեր կեանքից դէպքեր չպատմէք գեղեցկուհիների մասին, համոզուած եղէք, որ տանու կտաք։

—Կինը հօ նրա համար չի վիճում, որ մի բանում ցանկանում է համոզել, այլ որ ցոյց տայ գիտէ վիճել։

—Նշանաւոր իմաստուններից մին ասել է, որ մարդիկ ամենաշատ զոհ տուել են և շարունակում են տալ, փոփոխամիտ ու յաճախ իրենց դաւաճանող կանանցը։

# VI. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

---

Եղունգների լեզուն։

Հասարակութեանը յայտնի չէ, որ եղունգները, մարդու առողջութեան, ամենաճիշտ որոշողն են հանդիսանում, մանաւանդ թոքերի, սրտի, ջղերի և ողնաշարա-ուղեղային մասնաւորապէս ժառանգական հիւանդութեանց դէպքերում։ Երկար եղունգներ ունեցող մարդիկ սովորաբար ուրիշներից յաճախ են ենթարկվում թոքային—շնչառութեան գործարանների հիւանդութեանց, այնպէս որ, շատ երկար եղունգներ ունեցող մարդու առողջութիւնը մեծ մասամբ միշտ թոյլ է լինում։ Այն մարդու, որի երկար եղունգների վրայ սկզբից մինչև ծայրը նկատվում է գծեր (ребришки), նա հարբուխի և հազի ժամանակ շատ զգոյշ պէտք է լինի։ Շատ երկար եղունգների կապտագոյն լինելը, նշան է թոյլ կազմուածքի և անկանոն արիւնադարձութեան։ Շատ կարճ եղունգները հաստատում են սրտի թոյլ գործունէութիւնը, մանաւանդ, այս այն ժամանակ աւելի է ճշտվում, երբ սպիտակ եղունգի կիսակամարը հիմքից շատ փոքր է լինում, կամ երբ հազիւ նկատվում։ Եղունգների մէջ ընդ մէջ եղած խորը ակոսները—նշան է մօտիկ անցեալում այդ մարդուն հասած ջղային դրութեան սաստիկ խանգարման։

Շատ նեղ եղունգները ցոյց են տալիս ողնաշարի թուլութիւն։

Խիստ ծուռը և բարակ եղունգները, հետևանք են ողնաշարի ծռուած-կեռացած լինելուն և մարմնի շատ թոյլ կազմութեան։

Այն մարդուն, որի եղունգները շատ տափակ են և կարծես քանի մօտենում են ծայրին, ափերից հեռանում են—կարող է սպառնալ անդամալուծութիւն։



# VII. ԲԺՇԿԱԿԱՆ

**Զկռտալու դէմ.**—Մի փոքր մաս հասարակ կերակրի աղ ցանել լեզուին և թուքի հետ կուլ տալ—կլանել, կամ թէ մի փոքր ժամանակ շնչառութիւնը պահել։

—

**Սրտի այրելու** (կմշտելու, отжога) դէմ, որը ստամոքսում գտնուած թթուածնի աւելորդութիւնից է առաջանում, պէտք է ջրով ընդունել 20—30 կաթիլ օշինդրի խոտից պատրաստած թրմոց (настой полыны), կամ անանուխի կաթիլներ (мятныя капли)։

Կէս թէյ գդալ սոդան կամ մագնեզիան ևս լաւ է օգնում։

—

—Մեղուների կամ վնասակար թիթեռների խածնելու դէմ օգտակար է, վնասուած տեղը բարկ-թունդ քացախով կամ մաղդանոսի թարմ հիւթով օծել։

Սխտորի կամ սոխի բարակ կտրած կտորը կպցնելուց ևս ցաւը անցնում է։

—

**Կատաղած շան նշանները.**—Շունը իր տիրոջը չի ճանաչում, երբ կանչում են չի մօտենում, առանց պատճառի յարձակվում է պատի վրայ, կամ դիմացը գտնուած առարկային։ Երևում է վրան անսովոր անհանգստութիւն, ճնշուած ու տխուր է տեսքը և հաջոցը դմուռ ու խռպոտ։ Այս սկսում է, ոչ ուտել, ոչ հաջել, որովհետև արդէն վրան է հասնում կոկորդի անդամալուծութիւնը։ Սաստիկ ծարաւութիւն է զգում, որից ամբողջ ժամեր մինչև անգամ կաթնի ափսէն լակելով, միայն փրփուրն է բերանից թափում, չկարողանալով մի կաթիլ կլանել։

Կատաղածների շներին պէտք է անմիջապէս հեռացնել մարդկանցից կամ շղթայել, որովհետև աւելի լաւ է շանը մի քանի օր կապած պահելու, քան թէ սարսափելի տանջանքներով մարդը մեռնելու։

—

**Ուշաթափուելու դէպքում**, ամենից առաջ հիւանդին մաքուր օդ շնչելու համար, պէտք է այնպէս պառկացնել, որ ոտքերը գլխից բարձր դիրք ունենան։ Իսկ շնչապատ չլինելու համար, գուցէ հարբուխից կամ այլ պատճառից քիթը բռնուած է, և չլինի թէ, բերանը փակուելով չկարողանայ շնչել, կամ լեզուն վնասուել, անհրաժեշտ է բերանին ատամների արանքում գդալ դնել—պահել և շատ շատ նշադրի սպիրտ կամ բարկ-քացախ հոտոտել տալ։ Միևնոյն ժամանակ պէտք է փորին զգուշութեամբ ձեռքով վրահարել և արհեստական շնչառութիւն առաջացնել։

—

**Կայծակը խփածին անմիջապէս** հանդերձը զգուշութեամբ հանելու է, որպէս զի այրուած տեղերը չպոկուեն։ Այս հիւանդին մէջքի վրայ պառկացնելով, սառը ջուր սրսկելու է և ոտքի անդամները սառը ջրով թաց արած սաւանով հարելու։

Անհրաժեշտ է նաև շտապել արհեստական շնչառութիւն առաջացնել, և զօրիչ դեղեր գործածել։

—

**Ամենախիստ սառնամանիքներին չցրտահարուելու համար**, տանից դուրս ելնելիս, պէտք է երեսը և ձեռքերը հարել գլիցերինով կամ վազելինով։

# VIII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈԿԱՆ

*Հացը տաք-տաք գործածելու վնասակարութիւնը.*

Նոր թխած հացը, ինչ ալիւրից էլ որ պատրաստուած լինի, դա միևնոյն է, սակայն տաք-տաք ուտելու դէպքում, ատամները փչացնում է ու փափկացնում։ Սրան ապացոյց է, թէ ինչպէս հացի մէջ եփուած կամ թխուած սոխը փափկանում է և դառնում գեղձ (դրդրճան, хрящъ).

Առողջութիւնը չվտանգելու համար, պէտք է, մէկ օր առաջ թխուած հաց գործածել։

—

ԾԻԾԱՂ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

—

Վաղ ժամանակից մարդուն զբաղեցրել է այն հարցը, թէ ինչպէս պահպանի իր առողջութիւնը և երկարացնի իր կեանքը։

Այս մասին, ինչպէս յայտնի է, շատ միջոցներ ու շատ կանոններ են առաջարկուած, մինչև վերջին Մեչնիկովի մածունը։

Ամերիկացի յայտնի ֆիզիկոս դր. Լուիզ Գեստչինսոնը մօտ ժամանակներս մարդկանց ուշադրութիւնը հրաւիրեց երկարակեցութեան մի նոր ֆակտորի վրայ,—այն է՝ լաւ տրամադրութեան վրայ։

Նա ասում է.

«Քիթդ կախ մի՛ շրջիր, մի՛ մտածիր կեանքի անաջողութիւնների մասին, մի՛ թող տար, որ զայրոյթը և խանդը թունաւորեն քո հոգին, այլ ծիծաղիր, ուրախացիր, որոնիր խնդուն զուարճութիւններ,—և երկար կապրես դու հողի վրայ»։

Այս է նրա րեցէպտը կամ դեղատոմսը։

Իբրև գիտնական, դ.-ր Գեստչինսոնը բնական-գիտական բացատրութիւն է տալիս ծիծաղի բարերար ներգործութեանը մարդկային օրգանիզմի վրայ։

Երբ մենք մրսում կամ ծիծաղում ենք, այդ ժամանակ ուժեղանում է մեր արեան շրջանառութիւնը և թեթևանում սննդի մարսողութիւնը։

«Ամբողջ սրտից» ծիծաղը հովահրում է թոքերի բոլոր խորշերը, ցնցում է ուսերը, շփում է լեարդը, հարթում է կնճիռները, արիւնը քշում է ամբողջովին դէպի կաշին, մաքրում է աչքերը և ուժեղացնում է պոլօճիկների գործողութիւնը։ Կարճ ասած՝ ծիծաղը երիտասարդացնող մի վաննայ է, որից յետոյ հասակաւոր մարդը իրան զգում է երեխայ, թարմ և ջահէլ արարած։

Իսկ վատ տրամադրութիւնը, ընդհակառակը, ինչպէս խլուրդ փորում է մեր առողջութեան լաւագոյն հիմքերը։

Դ.-ր Գեստչինսոնի ասելով, մանրադիտակային հետազօտութեամբ կարելի է ապացուցել, որ վախը, չարութիւնը, վհատութիւնը և այլ նման բաները քայքայիչ ներգործութիւն են ունենում մարդու օրգանիզմի վրայ։ Կարելի է ապացուցել, որ երիկամունքների (պլօճիկների) փոքրիկ դեղձերը վախի կամ զայրոյթի ժամանակ բաժանում են երեք տեսակ զանազան հեղուկներ։ Դրանցից մէկը ուժեղացնում է սրտի գործողութիւնը և ամբողջ մարմինը պատրաստում է պայքարի կամ վազքի։ Միւսը լայնացնում է արիւնատար երակները, լցնելով արիւնով—որով և բացատրւում է դէմքի կարմրելը յուզմունքի ժամանակ և այլն։

Օրգանիզմի նորմալ դրութիւնը խանգարող այս խախտումները կրկնվելով կարող են լուրջ կերպով կարճել մարդու առողջութիւնը։

Դ.-ր Գեստչինսոնը նախազգուշացնում է միայն մի տեսակ ծիծաղից—չարախինդ ծիծաղից։ Այդ ծիծաղը հէնց պատճառ է լինում վերոյիշեալ թոյների բաժանման, ուստի և սաստիկ վնասակար է։

# IX. ՏԱՆՏԻԿԻՆ

Դիմացկուն շրէշ։

Ընտանեկան գործածութեան մէջ շատ յաճախ հարկաւորվում է առհասարակ ալիւրի շրէշ կամ օսլայ։ Բայց երկուսն էլ շատ շուտ են փչանում։ Այսպիսի շրէշներին երկար ժամանակ պահելու համար, պէտք է մի փոքր անանուխի կամ ակիպիդարի բնահիւթ (էսէնցիայ) խառնել, որից թէև շրէշը պնդանում է, սակայն մի փոքր թրջելուց յետոյ անմիջապէս հալվում։ Եթէ մի փոքր քացախ էլ խառնուի, նոյնպէս առանց փչանալու երկար է պահվում։

—

Ծխից չխեղդուելու դէպքում պէտք է, բերանին ու քթին ջրով թըրջած մաքուր թաշկինակ, կամ մի որեւէ լաթի կտոր կապել։

Հաւկիթի թարմութիւնը իմանալ՞ու ամենահասարակ միջոց։ Պէտք է մի թէյի բաժակ ջրում 5 մսխալ (զոլոտնիկ) հասարակ աղ լուծել, որի մէջ ձգելով թարմ ձուն խորասուզվում է, իսկ փչացած ձուն, ինչպէս աւելի թեթև ջրի երեսին լողում։

—

Ժամանակից գունատուած (խունացած) ապակէ ամանները հեշտութեամբ մաքրվում են և իրանց սկզբնական գոյնն են ստանում, եթէ հասարակ նաւթով լաւ մաքրում են և մի քանի անգամ ջրով ողողում։

# X. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Նորածին կենդանիներին կաթը համբելու միջին ժամանակամիջոցը՝

Որպէս զի նորածին կենդանիք լաւ կազդուրուեն, պէտք է թոյլատրել իրանց մօր ստինքից կաթը ծծելու հետեւեալ հաշուով՝

| | | |
|---|---|---|
| Խոզերին . . . . . | 7 | շաբաթ |
| Այծերին . . . . . | 8 | » |
| Կովի հորթերին . . . | 10 | » |
| Ձիերու քուռակն. . . . | 15 | » |
| Իշու . . . . . . . | 16 | » |
| Գառներին . . . . . | 17 | » |

—

Կենդանիներից ընտիր սերունդ սերելու համար առհասարակ պէտք է ընտրել.

| | | |
|---|---|---|
| Գառան . . . . | 2-ից 6 | տարեկանը |
| Ոչխարի. . . . | 2-ից 8 | » |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խոզինը . | 9 ամսից | մինչև | 7 | տարեկ. |
| Վարազի . | 1 տարեկ. | մինչ. | 4 | » |
| Կովինը . . | 18 ամսից | » | 10 | » |
| Եզան (բուղի) | 2 տարեկ. | » | 7 | » |
| Մատակ ձիու | 4 » | » | 12 | » |
| Ձիու . . | 4 » | » | 15 | » |

—

Գիւղատնտեսական չափերը՝

| | | |
|---|---|---|
| Մի դոյլ ջուրը քաշում է | 30 | գրվ. |
| » » կաթը » | 31 | » |
| Գարու ռուսական չետվերիկը | 38 | » |
| Ցորենի » » | 1 փութ 8 | » |
| Սիսեռի » » | 1 » 10 | » |
| Հարիւր հատ այրած աղիւսը | 20 | փութ |



# XI. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

*Կենդանիների յղութեան և թուխս նստելու տևողութիւնը։*

| | |
|---|---|
| Դեղձանիկը | 14 օր |
| Հաւը | 21 » |
| Հնդկահաւը | 26 » |
| Սագը | 29 » |
| Բադը | 30 » |
| Մուկը | 30 » |
| Ճագարը | 30 » |
| Առնէտը | 31 » |
| Թութակը | 40 » |
| Կարապը | 42 » |
| Կատուն | 54 » |
| Կատուան | 55 » |
| Աղուէսը | 62 » |
| Շունը | 63 » |
| Գայլաշունը | 64 » |
| Կատուառիւծը | 73 » |
| Առիւծը | 100 » |
| Խոզը | 120 » |
| Կուղբը | 4 ամիս |
| Այծը | 5 » |
| Ոչխարը | 5 » |
| Կովը | 5 » |
| Արջը | 6 » |
| Կապ'կը | 7 » |
| Ռնգեղջիւրը | 9 » |
| Ձին | 11 » |
| Էշը | 12 » |
| Գոմէշը | 12 » |
| Ուղտը | 12 » |
| Ընձուղտը (ժիրաֆ) | 14 » |
| Փիղը ծնում է | 21 ամսից |

Պատահում են յղութեան անբնական տևողութեան դէպքեր, օրինակ

Ձիունը 339 օրից մինչև 419-ն

Ցաւարի 321 — — 411

Ոչխարների ու այծերի 145—168

Խոզերինը . . . . 102



# XII. ԽԱՌՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### Հետաքրքիր հայր.

Սիբիրի Գեռչանսկ անունով գիւղում բնակւում է Լազար Աֆանասևիչ Գակլանովը, որի տարիքը 115 անց է և պսակուած է երկրորդ ամուսնութեամբ։ Այդ երկու ամուսնութիւնից նրանից սերուել է քառասուն և չորս երեխայ։

—

### Ոսկու գլխաւոր շուկան.

Ամերիկեան Միացեալ Նահանգներրը մի տարուայ ընթացքում 1915 թ. յուլիսի 1-ից մինչև յունիսի 30-ը 1916 թ. արտահանութիւնը հասել է 4345 միլիօն դոլարի, որ հաւասար է 8½ միլիարդ ռուբլու, ըստ վերջին օրերի կուրսի 13½ միլիարդի։ Այսպիսով ոսկու գլխաւոր շուկան ներկայումս փոխադրուել է Եւրոպայից Ամերիկայ, որովհետև Միացեալ Նահանգների առևտուրը գերազանցել է Անգլիայի առևտրին ամբողջ 40%, իսկ Գերմանիայինը 65%։

—

### Թիֆլիսի անկարգութիւնների հետևանքը.

1916 թ. յունիսի 5—6-ին տեղի ունեցած անկարգութիւններից (погромы) մի շարք առևտրական տների և խանութների կրած վնասները։ Այսպէս, մանուֆակտուրային առևտրականոցներից վնասուել են.—եղբ. Միլեաների առևտ. տունը 500,000 ռուբլու, Դորոժնովի առևտրատունը 80,000 ր., Օհանեան և ընկ. (Միքայէլ. պրոս.) մօտ 100,000 ր., եղբ. Գրիգորեանցների (Միք. փող.) 15,000 ր., Կիրակոսեան և Օհանեանի (Միք. փ.) 50,000 ր., Կոզորեզովի առևտ. տունը (Կիրօչնայա փ.) 50,000 ր., Ղլթճեան (Ձերքեզ. փ.) 25,000 ր., Օհանեան (Ձերքեզ. փ.) նոյնպէս 25,000 ր. և այլն։ Հագուստեղէնի խանութներից վնասուել են եղբ. Սափարեան և Տէր-Սահակեաններ (Գոլովինսկի պր.) 20,000 ր., Ա. Յարութիւնեան (Վօրոնցովի մօտ) 10,000 ր., Թառայեան (նոյն տեղում) 10,000 ռուբլի։ Կօշկեղէնի խանութներից վնասուել են. «Ելեգանտը» (Միքայէլեան փ.) 50,000 ր., Յ. Կ. Օհանեան (Վօրոնցովի մօտ) 10,000 ր., Դիանեան (Միքայէլեան փ.) 25,000 ր., Գասպարեան (Վերայի վերևը) 50,000 ր., Մուխրանեան փողոցի վրա գտնվող կօշկեղէնի երեք խանութներ՝ Մալինեանինը, Տէր-Օհանեանինը և Օֆիցէրսկինը՝ վնասուել են 15,000 ռուբլու, Եւանգուլեանի երկաթեղէնի խանութը (Վանքի և Մուխրանեան փողոցների անկիւն) 25,000 ր.։ Գալանտերէյնի ապրանքի խանութներից՝ Ժամհարեանինը (Միքայէլեան փ.) վնասուել է 50,000 ր., Մակարեանինը և Ճահրուզաղեանի 50,000 ր. և Ս. Արովեանի բակալէյնի խանութը (Միքայէլեան փ.) 50,000 ր.։ Միայն այս վաճառականների կրած վնասների մօտաւոր հաշիւը անցնում է 1,200,000 ռուբլուց։ Հաշուած չեն վնասները 26 առևտրականների (պաշտօն. հաղորդ. համաձայն), որոնք պատկանում են պակաս վնասուածների թւին։

# XIII. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## *118 կին առնողը*

*Բրազիլիական կառավարութիւնը Իտալանանին յանձնեց մի ոմն Պալլմերոն անունով իտալացու, որը մեղադրվում էր հարիւրից աւելի կին առնելու մէջ։ Ներկայումս իտալական Նէապոլ քաղաքի արքայական դատախազի ձեռքին գտնւում է Պալլմերոնի ապօրինի պսակման* 118 *գործերի քննութիւնը, որի ցուցակը հաւանական է որ դեռ դրանով էլ չվերջանայ։*

*Պալլմերոնը առաջին անգամ դեռ եւ իր կնոջ կենդանութեան ժամանակ* 1874 *թ., այսինքն սրանից* 42 *տարի առաջ պսակվում է ապօրինի ամուսնութեամբ։ Իսկ վերջերս, թէեւ նա արդէն* 68 *տարեկան էր, բայց եւ այնպէս շատ հեշտութեամբ կարողանում էր խաբել կանանց, թէ խախտում նրանց կուսութիւնը եւ թէ տանում հարուստ օժիտ։ Նա ինչպէս ինքն եւ խոստովանում է, ամեն մի այդպիսի դէպքի համար միայն երեք շաբաթ ժամանակ է գործադրել։*

*Սրանից տաս տարի առաջ պատահած դէպքերը, Պալլմերոնը աւելի մանրամասնօրէն եւ առանձին հաճութեամբ ճիշտ է պատմում, որովհետեւ հաստատապէս համոզուած է, որ ըստ օրինի տաս տարի անցնելուց յետոյ ազատ է ամէն պատասխանատուութիւնից։*

*Պալլմերոնը ի միջի այլոց հաստատում է, որ ամենադժուարութեամբ համաձայնող ու ամենախոհեմ կանայք անգամ, ամուսնական առաջարկութիւններից այնպէս են գլուխները կորցնում, որ իրանց կողմից եւ անմիջապէս, առաջադրում են բոլորին էլ փորձել։ Բացի այդ Պալլմերոնը ասում է, «թէ ձեր սիրոյ առարկան ձեզ չի ցանկանում, կամ տատանվում է, ցոյց տուէք պսակի երեւոյթը* (миражъ брака) *եւ հաստատապէս համոզուած եղէք, որ հարիւրից իննսուն դէպքերում, նա ձեր գիրկը կը ընկնի։*

*Պալլմերոնը պսակվում էր միայն այն կանանց վրայ, որոնք օժիտ ունէին, թէկուզ այդ հենց պակաս չափով լինէր։ Այսպիսի հանգամանքներում նա այնքան էլ պահանջկոտ չէր, որովհետեւ հա-*

տատապէս գիտէր, որ երկուսով իրանց կեանքը հազիւ 2—3 ամիս տևէր։

Մի անգամ էր միայն որ 600,000 ֆրանկ օժիտ ստանալով վեց օրից յետոյ կնոջից փախաւ։ Իսկ ընդհակառակը հետևեալ կնոջ հետ, սիրահարուած, ամուսնանալով 8,000 ֆր. օժիտ վերցրեց և կնոջ հետ համարեալ մի ամբողջ տարի ապրեց, սպասելով իր երեխայի ծնուելուն։

Ընդհանուր հաշուով Պալմերոնը այդքան ամուսնութիւններից մի քանի միլլիոններ է ստացել, սակայն ձերբակալման միջոցին, նա միմիայն 2000 ֆրանկ ունէր, բայց շատ շքեղ ու հարուստ հանդերձների պահարան (гардеробъ)։

# XIV. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## † ԴԷՈՐԳ ՉՄՇԿԱԱՆ

Անցեալ 1915 թ. դեկտեմբերի 29-ին Պետրոգրադում վախճանուեց հայ—թատրոնի վետերան Գ. Զմշկեանը։

Վաթսունական թւականներից էր, որ Գէորգը թողնելով արքունական ծառայութիւնը, իրան նուիրեց հայ-թատրոնին՝ իբրև սիրահար մշտական դերասան։

Թողնելով նրա կենսագրութիւնը մեզանից աւելի ձեռնհաս անձանց գրելու, և դետեղելով միմիայն նրա պատկերը, անհրաժեշտ ենք համարում այսքանը գոնէ ասել, որ հայ-թատրոնը իր գոյութեան սկզբից, եթէ ունեցել է մի ամենամօտ բարեկամ, դա եղել է Գէորգը, որովհետև ոչ մի թատրոնի գործիչ կամ դերասան, այն ջանքը և այն եռանդուն գործունէութիւնը չի ցոյց տուել, ինչպէս հանգուցեալը։

Իբրև դերասան Սունդուկեանի գրած պիեսաների դերերի մէջ օրինակելի էր, նամանաւանդ անմահ Պէպօի մէջ, որի հենց տիպը հեղինակելուն՝ ստեղծող—մասնակիցն էր։

Բացի իւր գրած պիեսաներից ունի և թարգմանութիւններ ռուսերէն և ֆրանսերէն պիեսաներից։ Իսկ գրականութեան մէջ նրա փոքրիկ վեպիկները և թատրոնական յիշողութիւնները շատ սիրով ու հետաքրքրութեամբ կարդացվում էին հասարակութեան կողմից, որոնք լոյս էին տեսնում հայոց թերթէրում։

Հանգիստ հայ-թատրոնի պապի շիրմին և յաւիտենական յիշատակ գրչի աշխատաւորին։



† Գէորգ Չմշկեան

# XV. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊԱՏԻՃԷՆՑԻ ՑԱՐԷԹԸ

(Տաճկական դաղանութիւնների մասին)

Կուրղինենց Գրիգորի որդի Ցարէթը 13 տարեկան տղայ է, որ փետրվարի մէջ Երզրումի առնելուց յետոյ՝ դուրս էր եկել քաղաքից, հասել Ալէքսանդրոպոլ, ուր նրան սպասում էր տարի ու կէս առաջ օսմանեան բանակից փախած եղբայրը։ Թէև փոքրահասակ է Ցարէթը, բայց տանջանքներն ու սրածութիւնները հասունացրել են նրան, և նա վշտահար հասակաւորի նման պատմեց այն սոսկալի աղէտները, որոնք տեղի ունեցան Օվալում սրանից չուրջ մի տարի առաջ։

Համբարձման օրը մեր թուրք դրացիները,—սկսեց պատմել Ցարէթը,—ժանդարմների հետ մտան Պատիճէն և մունետիկով յայտարարեցին, թէ բոլոր հայերը պիտի գաղթեն Մամախաթուն, այնտեղից էլ Երզնկա։ Անմիջապէս մեր գիւղից երկու նախիր մալ (200 կով) հաւաքեցին և մէկ սիւրի էլ ոչխար, որ տանեն ասկերին պաշար։ Կովն ու ոչխարը հաւաքելիս սուգն ու չիւանն ընկաւ գիւղը, բայց ժանդարմները չը թողին չորորալու, մորակն ու մահակը առաջ բերին, ծաղկեցին ու ճպտեցին թշուառ ժողովրդին՝ 2—3 ժամվայ ընթացքում կողոպտեցին ողջ գիւղը, սայլերը լծեցին, հարս, աղջիկ, տղայ վրաները բարձին, քշեցին Երզինճայի կողմը, որ տանեն Մամախաթուն։

Տղամարդիկը բաժանեցին կիներից, թևերը ետևները կապեցին, քշեցին Երզինճայի կամուրջի վրա, կոտորեցին, ջարդեցին, թափեցին Սև-ջուրը, որն անմիջապէս կարմիր արիւնով ներկվեց, ու ու վառ գոյնով շարունակեց իր վարար հոսանքը։ Այնպէս անխնայ էին ջարդում, որ չէին խնայում ոչ ծերին, ոչ երիտասարդին, ոչ էլ պատանուն։

—Գնդակը ափսոս է,—գոռում էր հարիւրապետը,—դաշոյնով, դամալով զարկէք։

Իրանց ծնողների, ամուսինների, եղբայրների սիրուն շատ սիրուն աղջիկներ, հարսներ իրանց գցեցին գետը, խեղդվեցին, որպէս զի ազատուեն հոգեկան տանջանքներից։

Գիւղի տէրտէրին՝ տէր-Յովհաննէսին, որն առաջնորդում էր հարս-աղջիկներին ու երեխաներին ձիպիճայում, մի դաշոյնի հարուածով գլուխը զարկին, գլորեցին։ Տղամարդ ողջ չը թողին ձիպիճա, իսկ կանանց անցրին գիւղի մօտից և քշեցին սայլերը դէպի Իլիջա։ Այդ օրը տեղահան արին մեզ հետ Դիմնիկի, Գոմքի, Ըղտաձորի և ձիպիճայի բոլոր հայ ժողովրդին, կոտորեցին ու քշեցին։ Ձիպիճայից մինչև Մամախաթուն երեք օրվան մէջ հասաւ հարս-աղջկայ և երեխաների սայլերի կարաւանը, որտեղ մեզ ոչխարի նման տարան լցրին եկեղեցի։ Մամախաթուն թիւրքերը վրա տուին և սկսեցին հարս-աղջիկ ու երեխայ փախցնելը։ Մի 80 տարեկան ալեւոր թիւրք երկու աղջիկ տարաւ։ Մեզ տանող զափթիաները (ոստիկան) ամէն օր ստիպում էին թշուառ կանանց, որ նրանց փող, ոսկի տան, որ իրանց չը սպանեն։ Ամէն իրիկուն թշուառ կանայք ինչ-որ հոգեպահուստ փող, զարդ, կրծքի ոսկի, մատանի, ինչ ունէին՝ բոլորն էլ տալիս էին զափթիէներին։ Ամէն իրիկուն 3—4 աղջիկ բաց տանում էին այդ գազաններն և կիսամեռ էին թողնում

Ժամի մէջ մեզ երկու օր քաղցած թողին, որպէս զի ինչ որ պահած ունենք, դուրս հանենք մեր ջահէլներն ու տան ժանդարմներին։ Ապա քշեցին տարան Երզնկա։ Երզրումի Տաճարին փողոցն ապրող հաջի-Միհրանը և հաջի-Պետրոսը չը կարողացան տանել այդ զարհուրելի տեսարանները, ընկան Մամախաթունի կամրջից գետը և խեղդվեցին։ Ես մի կերպ քարշ էի գալիս այդ սայլերի կարաւանի հետ և գլուխս փրկելու համար անվերջ ու ամէն րոպէ կրկնում էի «Լա իլահա իլ Ալլահ», որը մեծ հրճուանք էր պատճառում շըրջապատող թիւրքերին։ Ես չէի ուզում գնալ Երզնկա, ուստի գիշերը փախայ կարաւանից և գնացի դէպի Երզրում։ Գիշեր ու ցերեկ ման գալով, անվերջ թիւրքերէն խօսելով ու «սալաւաթ» բերելով մտայ Երզրում։

Արդէն ճանապարհին ծրագրել էի. գնացի մտայ մեր հին ծանօթ բախկալ (նպարավաճառ) Արիֆ աղայի տունը, որն այդ ժամանակ չաթարաշի (կամաւոր խմբի հազարապետն էր և Երզրումի մէջ մեծ հռչակ ունէր։ Արիֆ աղան ամուսնացած էր Մալեմէջի աղջկայ հետ, որն անչափ հարուստ էր և իրանից 20 տարով մեծ էր և զաւակ էլ չունէին։ Մտայ Արիֆ աղայի տունը, ընկայ ոտները և խնդրեցի, թէ ստրուկս գնիր։

Մարդ ու կին խնդիրս ընդունեցին և ինձ տարան ղազիի մօտ որը կարևոր հրամանը տուեց ինձ փրկելու և Թիւրքացնելու։ Ա[յ] օրերը երկու Էրզրումցի Թիւրքերի կախեցին՝ հայերին իրանց տնե րի մէջ պահելու համար, այս պատճառով ով որ հայ տղայ Թիւր քացնէր, մահից ազատէր, անպատճառ ղազիին պիտի յայտնէր։ Ա րիֆ աղայի տունը Գիւլահմէդի Թաղում, Դէրվիշ-աղա փողոցի վր էր, որտեղ ես էլ նրանց գոմի սեամքումն էի պառկում։

Ամբողջ եօթն ամիս Արիֆ-աղայի կովերի, ձիերի կերն ջուրը ես էի տալիս, ամեն օր մօլլի մօտ էի գնում աղօթքներ ս[ո]վորելու, նամազ կատարելու և պատրաստվում էի Թլպատվելու։ Ն[ո] Էրզրում մտնելուց յետոյ, 8—10 օր չանցած, Թիւրքերը կախեցի[ն] մեր սրբազանին, ասելով թէ՝ ինչու Վանում հայերն ապստամբե ցին և ռուսի առաջն ընկան, բերդն առան։ Այս հայերին քաղա քից քշեցին։ Հայերն երթալուց առաջ իրանց բոլոր ապրանքը տա ման ժամը լցրին։

Հայերին քաղաքից քշելուց յետոյ, կեանքը մեռաւ Էրզրու մէջ։ Թիւրքերն անդամ խօսում էին, թէ ինչու հայերին քշեցին աւերակ դարձրին քաղաքը։ Արիֆ-աղան չարունակ գնում էր շր ջակայ քաղաքները, չեթաներին քննում, ոգևորում և 2—3 օր վերադառնում էր։ Ինձ այնքան համակրեց, որ ուզում էր Թլպա տելուց յետոյ որդեգրել։ Բայց նա իր ցանկութեան չը հասաւ։ Հա սան-Կալէի անկումը սարսափ սփռեց ողջ քաղաքում, իսկ Կարս գէօբէկից և Թաւթից եկած ռումբերը ցրվեցին Էրզրումի Թիւրք րին։ Երկու օրվան մէջ ոչ միայն ժողովուրդը, չէթաները, ասկեար այլ նոյն իսկ փաշաներն ու վալին թողին քաղաքը ու փախան։

Բաւական չէր հայերին կոտորեցին ու ցրվեցին, երբ Դէվ Բօյնուի մէջ պարտվեցին, առաջնորդարանը, Նազուկի-չարսուն Տաճարին փողոցն էլ վառին, որ հայի ամբողջ գոյքը ոչնչացնե Ինձ թողել ու փախել էին ռուսները Էրզրում մտնելուց առաջ. երբ առաւօտեան տնից դուրս եկայ, տեսայ կօզակներին, որոնք խանութի մէջ նստած կաղին-չամիչ էին ուտում. . . . . . Նրանց մօտեցայ և խնդրեցի, որ ինձ ազատեն։ Հայ լինելս նրան ուրախացրեց, անմիջապէս որոշեցին այն օրն իսկ աբօղի հետ ո ղարկել Սարըկամիշ։

Առաքել

# XVI. ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԵՐՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ

| | Անունները | Տիրապետող կրօնը | Պետութեան գլուխը | Տարածութիւնը ք. քիլ. | Բնակչաց թիւը | Մայրաքաղաքները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբստան | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,002,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հան. | Քրիստոնէակ. | Ֆիգուէրա-Ալկոր. | 2,835,969 | 6,003,000 | Բուր-Այէրոս |
| 3 | Անամ | Անգլ. եկեղ. | Դուի-տան | 230,000 | 7,004,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » » | Գէորգ V թագ. | 314.628 | 47,000,000 | Լոնդոն |
| | » գաղթակ. | » » | » » | 24,964,096 | 420,000,000 | » » |
| 5 | Աւստրո-Հունգ. | Կաթոլիկ | Կարլ I | 676,667 | 52,000,000 | Վիեննա |
| 6 | Աւղանստան | Մահմեդական | Խաբիբուլլա-խան | 558,660 | 5,201,000 | Քաբուլ |
| 7 | Բելուճստան | Մահմեդական | Միր-Խոդադադ | 315,015 | 1,500,800 | Գելատ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Ալբերտ I. թագ. | 29,457 | 7,500,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլղարիա | Օրթոդոքս | Ֆերդինանդ իշխ. | 119,873 | 5,301,090 | Սոֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Նախ. Հոմմէս | 8,537,213 | 22,000,000 | Րիօ-ժանիէրօ |
| 11 | Բուխարա | Մահմեդական | Սէիդ-Արդուլ Էմ. | 239,000 | 1,700,000 | Բուխարա |
